## 74. ՇԱՎԱ ԳՅՈՒՂ

*Գյուղամիջում կա Թաղակապ եկեղեցի, որի պատերի մեջ օգտագործված են բազմաթիվ խաչքարեր և տապանաքարեր։*

***698. ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան մուտքի շրջանակի եզրին՝ խաչ և 3 տող.*



ՄԽ[ԻԹԱ]Ր. :ՊԿ: (1411):

***699. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, երևացող երեսին կենցաղային տեսարան, ագուցված է եկեղեցու արևելյան պատին, արտաքուստ, պատուհանի մոտ, խաչքարի տակին՝ 3 տող.*



ԹՎ[ԻՆ] :ՌՀԸ: (1629):

***700. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, դրված է մուտքին, որպես կողաքար, վրան՝ ննջեցյալ և 2 տող.*




ՊՈՏՐՈՍ, ՊՈՂ[ՈՍ]. ԹՎ[ԻՆ] :ՌՃ: (1651):

## 75. ԱՀՄԵՂԼՈՒ ԳՅՈՒՂ

*Գյուղամիջում կա անտաշ քարերով Թաղածածկ մի եկեղեցի, որի պատերի մեջ օգտագործվել են հին խաչքարեր և գերեզմանաքարեր, բակում մնում են դրանցից մի քանիսը։*

***701. ԽԱՉՔԱՐ**, ղեղաքանդակ, կանգնած է եկեղեցու հարավային պատի տակ, կիսովին ծածկված կից շինված տան պատով. երևում են 3 տողի սկզբի մասերը.*




ԱԾ. ՈՂՈՐՄԻ Զ . . . |
ԷՏԻԼ ՂՅԿ . . . . . . . |
ԹՎ[ԻՆ] :ՋԿԶ: (1517).:

***702. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, ագուցված է եկեղեցու հարավային պատի մեջ, արտաքուստ, 1 տող.*




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ:

## 76. ՄԻՐԻԿ ԳՅՈՒՂ

*Գյուղամիջում դեռ կանգուն է Թաղակապ եկեղեցին, բակում մնում են մի քանի տապանաքարեր։*